

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տ.գ.դ., պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ, տ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի

ավագ գիտաշխատող

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՍՏՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Համաշխարհային տնտեսության վերջին տարիների զարգացումները առաջ բերեցին հակաճգնաժամային կարգավորման նոր մեխանիզմների ներդրման անհրաժեշտություն, այդ թվում նաև բանկային համակարգում: Այս ոլորտում մեծ կարևորություն է ձեռք բերել կարգավորման տեսական և գործնական նոր մոտեցումների, մասնավորապես, ճգնաժամային երևույթների կանխման, դրանց վաղօրոք հայտնաբերման և կանխատեսման նոր գործիքների և միջոցառումների մշակումը: Սրա հետ մեկտեղ, հարկ է նշել որ, ներկայումս, բազմաթիվ երկրներում կիրառվող կարգավորման միջոցները և գործիքակազմը ամբողջովին չեն բխում ֆինանսական համակարգում առկա զարգացումների օբյեկտիվ պահանջներից, ինչի մասին են վկայում վերջին ժամանակներում տեղ գտած մի շարք բանկային ճգնաժամները և դրանց արդյունքում բազմաթիվ խոշոր ֆինանսական կառույցների փլուզումները: Հետևաբար, անհրաժեշտ է ներդնել բանկային համակարգի կարգավորման և վերահսկողության արդյունավետության գործուն մեթոդներ, որոնք թույլ կտան բարձրացնել կարգավորման արդյունավետությունը՝ անհրաժեշտության դեպքում արձագանքելով շուկայի զարգացումներին՝ արագ կերպով համապատասխան ճշգրտումներ մտցնել կարգավորման գործիքակազմում և մեթոդներում:

Կայուն ֆինանսական համակարգը էական դեր ունի տնտեսության առողջ զարգացման համար: Այդ տեսանկյունից կարևոր է պետական կարգավորող մարմինների և տնտեսական հարաբերությունների մասնակիցների վստահությունը այն բանի հանդեպ, որ երկրի ֆինանսական համակարգը կայուն է և ունակ պատշաճ կերպով տնտեսությանը մատուցել հիմնական ֆինանսական ծառայությունները:

Ֆինանսական կայունության ապահովումը մի շարք երկրների կենտրոնական բանկերի առաջնային խնդիրներից մեկն է: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ցածր գնաճը, գործազրկության մակարդակը, բարձր տնտեսական աճը, որպես պետության դրամավարկային և ֆիսկալ քաղաքականության առաջնային խնդիրներ, ժամանակակից տնտեսություններում չեն կարող ապահովվել առանց զարգացած և կայուն ֆինանսական համակարգի միջնորդության, ինչի արդյունքում դրամավարկային քաղաքականության միջոցառումները տրանսմիսիոն մեխանիզմով արդյունավետորեն փոխանցվում են տնտեսության իրական հատվածին:

Ամենապարզ սահմանմամբ՝ ֆինանսական կայունությունը՝ ֆինանսական անկայունության կամ ճգնաժամի բացակայությունն է, երբ ֆինանսական ակտիվների գները մեծ տատանումների չեն ենթարկվում, և ֆինանսական կազմակերպությունները ունակ են կատարելու իրենց ստանձնած պարտականությունները, մասնավորապես, ավանդների ներգրավում, վարկերի տեղաբաշխում,

վճարումների և հաշվարկների իրականացում, ֆինանսական ռիսկերի արդյունավետ կառավարում, ինչպես նաև «շոկային» իրավիճակներում առաջացած հնարավոր ռիսկերի կլանում:

Ֆինանսական կայունությունն ինքնին ընդհանրական հասկացություն է և վերաբերում է ֆինանսական համակարգի տարբեր բաղկացուցիչներին՝ ֆինանսական հաստատություններին, ֆինանսական ենթակառուցվածքներին և ֆինանսական շուկաներին, որոնք խիստ փոխկապակցված են միմյանց: Ֆինանսական կայունությունը խաթարվում է, երբ ֆինանսական համակարգի բաղկացուցիչներից որևէ մեկում անբարենպաստ զարգացումները էականորեն անդրադառնում են ամբողջ ֆինանսական համակարգի բնականոն գործունեության և երկրի տնտեսական արդյունքների վրա: Ֆինանսական համակարգում ցնցումներն, իրենց հերթին, կարող են մակրոտնտեսական տատանումների արդյունք լինել, և հակառակը: Ֆինանսական կայունությունը ամենաընդհանուր սահմանմամբ ընկալվում է որպես ֆինանսական հաստատությունների և ֆինանսական շուկաների կայունություն, և ոչ թե առանձին վերցրած հաստատության սնանկության հայտանիշների և (կամ) ակտիվների գների տատանողականության բացակայություն:

Ֆինանսական կայունության ապահովումը ենթադրում է ֆինանսական ռիսկերի ոչ ճիշտ կառավարման, ակտիվների գների ձևավորման անարդյունավետության բացահայտմանն ուղղված համապատասխան քաղաքականության իրականացում:

Հարկ է նշել, որ ֆինանսական կայունությունը չի կարող արտահայտվել որևիցե մեկ քանակական ցուցանիշով, ինչպես օրինակ, գների կայունությունը կամ գործազրկությունը: Ֆինանսական կայունության քանակական բնութագրման համար, սովորաբար, կիրառվում է ցուցանիշների սահմանված համախումբ, ընդ որում, յուրաքանչյուր ցուցանիշն, իր հերթին, բնութագրվում է ֆինանսական կայունության վրա ազդելու իր հավանականությամբ: Երկրի ֆինանսական համակարգի առանձնահատկություններից ելնելով՝ կարող են կիրառվել նաև ֆինանսական կայունությունը որոշակիորեն բնութագրող ցուցանիշների հատուկ (յուրօրինակ) խմբեր:

Բանկային վերահսկողության արդյունավետության միջազգայնորեն համընդհանուր ճանաչված պրակտիկան հիմնված է շրջանակային մի փաստաթղթի վրա, այն է՝ «Բանկային վերահսկողության արդյունավետության հիմնարար սկզբունքներ», որով սահմանվում են բանկային վերահսկողության և կարգավորման նվազագույն չափորոշիչները¹: Այս փաստաթղթում ամրագրված դրույթներին համապատասխան՝ Արժույթի միջազգային հիմնադրամը՝ երեք տարին մեկ գնահատում է բազմաթիվ երկրներում բանկային վերահսկողական համակարգի արդյունավետությունը և հրապարակում դրա արդյունքները համապատասխան եզրահանգումների տեսքով: Վերջիններս կրում են ավելի շատ որակական բնույթ՝ հանգելով նրան, թե ինչքանով է այս կամ այն երկրի բանկային վերահսկողությունը և կարգավորումը համապատասխանում բանկային արդյունավետ վերահսկողության որդեգրած սկզբունքներին: Իրականում, պարզելու համար այն հարցը, թե ինչպիսի արդյունքների են բերում Բազելյան կոմիտեի կողմից բանկային վերահսկողության գծով սահմանած պահանջները, ինչպես նաև բանկային հատվածի վիճակի և կարգավորող մարմինների կողմից վերահսկողական գործառնությունների իրականացման որակի փոխկապվածության աստիճանը բնորոշելու համար՝ ԱՄՆ մասնագետները 2006 թվականին հետազոտություններ անցկացրեցին թվով 65 երկրների մակարդակով՝ պարզելու, թե արդյոք բանկային վերահսկողության սկզբունքների պահպանումը տալիս է որոշակի օգուտներ, թե ոչ²: Արդյունքում, հետազոտողները եկան մի եզրահանգման, ըստ որի՝ գոյություն ունի ուղղակի կապ՝ երկրի կողմից արդյունավետ բանկային վերահսկողության սկզբունքների կիրառման և տվյալ երկրի բանկային հատվածի առկա իրավիճակի միջև, դրանով իսկ ապացուցելով Բազելյան կոմիտեի պահանջների կիրառման արդյունավետությունը:

¹ Базовые принципы эффективного банковского надзора/ Базельский комитет по банковскому надзору, 2006.

² Does compliance with Basel core principles bring any measurable benefits?/ IMF staff papers, IMF, 2006, № 2.

Հարկ է նշել, որ բացի վերոգրյալից, բանկային կարգավորման ոլորտում որպես առանձին կարևոր հարց է դրված նաև բանկային գործունեության հակաճգնաժամային կարգավորման արդյունավետության գնահատումը: Հակաճգնաժամային կարգավորման գործընթացի զարգացման համատեքստում ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվությունների կազմումը, որը, սովորաբար, իրականացվում է կենտրոնական բանկերի կողմից, հանդիսանում է կարևոր գործիք՝ արտացոլելու տվյալ պետության ֆինանսաբանկային համակարգի առկա իրավիճակը, կարգավորող մարմինների քաղաքականությունը՝ հակաճգնաժամային կարգավորման ոլորտում և ֆինանսաբանկային ոլորտին առնչվող ռիսկերի մակարդակը: Փաստենք, որ հենց վերոթվարկյալների վերլուծության հիման վրա է հնարավոր դառնում գնահատել բանկային գործունեության հակաճգնաժամային կարգավորման արդյունավետությունը:

1. Ըստ ԱՄՀ տվյալների՝ 2012 թվականի դրությամբ ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվություններ են թողարկել շուրջ 80 երկրներ¹: Բազմաթիվ երկրներում ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվությունները հանդիսանում են ծրագրային փաստաթղթեր և իրենց նշանակությամբ համադրելի են դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին հայտարարգրի հետ: Հարկ է նշել նաև, որ միջազգային պրակտիկայում ոչ բոլոր երկրների կենտրոնական բանկերն են հրապարակում ֆինանսական կայունության մասին կանխատեսումները: Սակայն, միևնույն ժամանակ կան երկրներ, ինչպիսիք են օրինակ Կանադան, Նոր Զելանդիան, Հարավային Կորեան, որոնց կենտրոնական բանկերը իրենց հետագա գործունեության համար նպատակ են դրել ֆինանսական կայունության վերաբերյալ կանխատեսումների հրապարակումը:

Ֆինանսական կայունության հաշվետվության հիմնական նպատակն է՝ կարճաժամկետ հեռանկարում իրական և ֆինանսական հատվածներում ընթացիկ և սպասվելիք զարգացումների համատեքստում՝ երկրի ֆինանսական կայունությանը սպառնացող հավանական ռիսկերի նկարագրումը: Հաշվետվությունում ներկայացվում է որոշակի ժամանակահատվածի համար ֆինանսական կայունության վերաբերյալ կենտրոնական բանկի գնահատականը, առկա ռիսկերը և դրանց կանխարգելմանը կամ չեզոքացմանն ուղղված միջոցառումները: Պարբերականի հրապարակումը թույլ է տալիս բարձրացնել ֆինանսական հաստատությունների, ձեռնարկությունների, տնտեսվարողների ու բնակչության տեղեկացվածության մակարդակը, միաժամանակ ապահովելով նաև կենտրոնական բանկի գործունեության թափանցիկությունը: Հավանական ռիսկերի աղբյուրների և ֆինանսական կայունության խոցելիության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն, իր հերթին, նպատակ ունի կողմնորոշելու հասարակությանը՝ ստեղծված իրավիճակներում որոշումների կայացման առումով:

Ֆինանսական կայունության հաշվետվությունների հրապարակման և ֆինանսական կայունության վրա դրա թողած ազդեցության փոխկապվածությունը ուսումնասիրվել է մասնավորապես Բ.Բորնի կողմից²: Վերջինս ապացուցեց, որ ֆինանսական կայունության հաշվետվության հրապարակումը նվազեցնում է շուկայական անորոշությունը: Ֆինանսական կայունության հաշվետվությունների հրապարակման դրական ազդեցությունը ապացուցվել է նաև Մ.Չիակի ուսումնասիրությունների արդյունքում³: Վերջինիս կողմից մշակվել է նաև համապատասխան մեթոդաբանություն՝ ֆինանսական կայունության հաշվետվությունների գնահատման համար, որը կիրառվում է ԱՄՀ կողմից՝ անդամ-պետությունների ֆինանսական կայունության հաշվետվությունների գնահատման համար: Այն կիրառվում է նաև բազմաթիվ երկրների կենտրոնական բանկերի

¹ www.imf.org

² Born B., Ehrmann M. and M. Fratzscher, 2011, "Central Bank Communication on Financial Stability", ECB Working Paper № 1332.

³ Cihak M. 2006, how do central Banks Write on financial Stability?, IMF Working Paper № 06/163.

կողմից՝ ֆինանսական կայունության հաշվետվությունները կազմելիս և լայն հնարավորություններ է ընձեռում ֆինանսական կայունության համեմատական վերլուծությունների իրականացման համար: Նշված մեթոդով առանձնացվում են ֆինանսական կայունության հաշվետվությունների հինգ կարևոր տարրեր՝ «Նպատակներ», «Ընդհանուր գնահատական», «Լուսաբանվող հարցեր», «Տեղեկատվական բազա» և «Կառուցվածք», որոնցից յուրաքանչյուրի համար սահմանվում և գնահատվում են երեք հիմնական չափորոշիչներ. հստակություն (clarity), նկարագրության համակարգվածություն (consistency) և ամբողջականություն (coverage): Այս երեք բնութագրիչների առաջին տառերին համապատասխան՝ նշված մեթոդը ստացել է «Երեք C-երի սկզբունք» («CCC framework») անվանումը:

Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կայունության ապահովման համար պատասխանատու մարմինը ՀՀ կենտրոնական բանկն է, ինչն ամրագրված է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի» մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, որպես ՀՀ կենտրոնական բանկի խնդիր, ի թիվս այլոց սահմանված է նաև՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովելը¹: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը նշված խնդիրն իրականացնում է ֆինանսական համակարգի ռիսկերի գնահատմանը և նվազեցմանն ուղղված իր աշխատանքների, ֆինանսական համակարգի վերահսկողության և կարգավորման գործառնությունների իրականացման, վճարային համակարգի հսկողության, անհրաժեշտության դեպքում նաև արտակարգ իրավիճակներում վերջին առյուծի վարկատուի գործառնության և սնանկ բանկերի վերակազմավորման, լուծարման գործընթացների իրականացման միջոցով:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը ֆինանսական կայունության վերաբերյալ վերլուծությունների արդյունքները անմիջականորեն ներկայացնում է ֆինանսական կայունության հաշվետվություններում: Վերջիններս ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարկվում են 2007 թվականից սկսած՝ տարեկան կտրվածքով, իսկ արդեն 2010 թվականից՝ նաև կիսամյակային պարբերականությամբ: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բնորոշմամբ՝ Ֆինանսական կայունության ապահովումը ֆինանսական համակարգը փլուզումից կամ խափանումից զերծ պահելն է, այնպես որ համակարգը շարունակի ապահովել անհրաժեշտ իրացվելիության մակարդակ, գործարքների և փոխանցումների անխափան իրականացում, տնտեսությունում խնայողությունների ներդրման ունակության պահպանում²:

Տարբեր երկրների ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվությունների վերլուծությունների հիման վրա դրանց կազմման գործընթացը կատարելագործելու և ֆինանսական համակարգի կայունությունը բարձրացնելու նպատակով, առաջարկում ենք.

1. Տնտեսության ընդլայնողականացման պայմաններում մեծապես կարևորվում է մշակել ֆինանսական կայունության հաշվետվությունների միասնական ձևաչափ, քանի որ բազմաթիվ երկրներում տարբեր ձևաչափերի կիրառումը և ժամանակի ընթացքում դրանց անընդհատ փոփոխությունը թույլ չի տալիս համադրել տվյալները՝ ըստ առանձին երկրների և գնահատել ֆինանսական կայունությունը համաշխարհային մակարդակով:
2. Հաշվետվություններում իրականացված վերլուծությունները ցանկալի է որպեսզի ընդգրկեն ավելի շատ թվով ցուցիչներ, որոնք կնկարագրեն բանկային հատվածի և ֆինանսական շուկայի կայունությունը, չսահմանափակվելով միայն ընդհանուր մակրոցուցանիշների կիրառմամբ:
3. Այս հաշվետվություններում հիմնական շեշտը անհրաժեշտ է դնել համակարգային ռիսկերի հայտնաբերման վրա և նպատակահարմար կլինի ներկայացնել ֆինանսական կայունության

¹ «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, ՀՀԱԺՏ 1996/12.

² Cba.am

վերաբերյալ կանխատեսումները կարճաժամկետ՝ մինչև 1 տարի և միջնաժամկետ՝ մինչև 3 տարի հատվածներում:

4. Անհրաժեշտ է բարձրացնել ֆինանսական կայունության հաշվետվությունների կարգավիճակը: Բազմաթիվ երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում ֆինանսական հաշվետվությունների կազմումը ամրագրված է օրենսդրությամբ: ԱՄՆ-ի օրենսդրությունը պահանջում է ոչ միայն այս հաշվետվությունների կազմումը, այլև սահմանում է այն հարցերի շրջանակը, որոնք պետք է բացահայտվեն այս հաշվետվությունների մեջ: Բացի այդ, հաշվետվության համար պատասխանատու մարմնի ղեկավարը պարտավոր է ներկայացնել այդ հաշվետվությունը ԱՄՆ-ի Կոնգրեսում: Նշված փաստաթղթի կարգավիճակի բարձրացումը թույլ կտա իր վրա բևեռել հանրության ուշադրությունը, նպաստելով այս փաստաթղթի ծրագրային դառնալուն՝ ներկայիս նկարագրողական փաստաթղթի փոխարեն: Արդյունքում այս փաստաթղթում կներկայացվի կարգավորող պետական մարմինների հստակ մշակված քաղաքականությունը և դրա շրջանակներում իրականացված գործողությունները, ինչպես նաև կտրվի կոնկրետ գնահատականներ՝ դրանց արդյունավետության վերաբերյալ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՍՏՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տ.գ.դ., պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ քղթակից անդամ
ՀՀ ԳԱԱ Մ. Զոհրաբյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ, տ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Մ. Զոհրաբյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Ներկայումս բազմաթիվ երկրներում կիրառվող կարգավորման միջոցները և գործիքակազմը ամբողջովին չեն բավարարում ֆինանսական համակարգում առկա զարգացումներից բխող օբյեկտիվ պահանջներին, ինչի մասին են վկայում վերջին ժամանակներում տեղ գտած մի շարք բանկային ճգնաժամերը և դրանց արդյունքում մի շարք խոշոր ֆինանսական կառույցների փլուզումները: Հետևաբար, անհրաժեշտ են բանկային համակարգի կարգավորման և վերահսկողության արդյունավետության գործունե մեթոդներ, որոնք բոլոր կտան գնահատել կիրառվող կարգավորման արդյունավետության աստիճանը և անհրաժեշտության դեպքում համապատասխան ճշգրտումներ մտցնել կարգավորման գործիքակազմում և մեթոդներում: Հոդվածում ուսումնասիրված են բանկային համակարգի կարգավորման և ֆինանսական կայունության հիմնախնդիրներին:

Բանալի բառեր. բանկային համակարգ, կարգավորում, վերահսկողություն, ֆինանսական կայունություն, արդյունավետություն, հակաճգնաժամային միջոցառումներ, չափորոշիչներ:

ПРОБЛЕМЫ АНТИКРИЗИСНОГО РЕГУЛИРОВАНИЯ
И ФИНАНСОВОЙ СТАБИЛЬНОСТИ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ

ВЛАДИМИР АРУТЮНЯН, д.э.н., профессор

директор Института экономики
им. М.Котаняна НАН РА
член-корр. НАН РА

КАРЕН САРГСЯН, к.э.н.

старший научный сотрудник
Института экономики
им. М.Котаняна НАН РА

Аннотация

В статье исследованы проблемы регулирования и финансовой стабильности банковской системы. Методы и инструменты регулирования, применяемые в настоящее время во многих странах мира, не в полной мере удовлетворяют объективным требованиям, выдвигаемым современными тенденциями развития финансовой системы, о чем свидетельствуют наблюдаемые в последние годы ряд банковских кризисов, приведших к краху многих крупных финансовых структур. Следовательно, необходимы действенные методы определения эффективности регулирования и надзора за банковской системой, позволяющие оценить степень эффективности применяемых механизмов регулирования, а в случае необходимости вносить в инструментах и методах регулирования соответствующие коррективы.

Ключевые слова: банковская система, надзор, финансовая стабильность, эффективность, антикризисные меры, критерии.

ISSUES ON ENSURING FINANCIAL STABILITY
AND ANTI-CRISIS REGULATION OF THE FINANCIAL SYSTEM

VLADIMIR HARUTYUNYAN

Doctor of Sciences (Economics), Professor
Corresponding Member
National Academy of Sciences
Republic of Armenia
Director
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

KAREN SARGSYAN

Candidate of Sciences (Economics)
Senior Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

Abstract

Regulation measures and toolkits currently applied/utilized in many nations don't entirely meet the objective requirements that need to reflect current developments in the financial system; hence, some banking crises and collapse of several large financial institutions caused by these crises reported in the last decade are the proof of the stated argument. Therefore, efficiently functioning methods of banking sector supervision and regulation are required that would allow to assess the efficiency of regulation applied/utilized and make respective corrections in the toolkit and methods of regulation, if necessary. The article studies the issues on banking system regulation and financial stability.

Keywords: banking system, regulation, supervision, financial stability, efficiency, anti-crisis measures, criteria.